ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի ապրիլի 15-ին ժամը 11^{00}-ին Թումանյանի համայնքապետարանում տեղի կունենա Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան քաղաքի, Դսեղ և Մարց բնակավայրերի վարչական տարածքներում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ-վաճառք և վարձակալության մրցույթ 4 լոտով:

Լոտ 1. Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան համայնք, ք.Թումանյան, 6-րդ փողոց, թիվ 31 հողամաս հասցեում գտնվող կադաստրային քարտեզի 06-004-0020-0038 ծածկագրում գտնվող 0,00216 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակության անշարժ գույքի աճուրդ-վաճառք: Մեկնարկային գին սահմանել 101000 (հարյուր մեկ հազար) ՀՀ դրամ:

Լոտ 2. Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան համայնք, Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0050-0006 ծածկագրում գտնվող 0,01729 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության անշարժ գույքի աճուրդ վաճառք:Մեկնարկային գին սահմանել 150000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Լոտ 3. Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան համայնք, գ. Դսեղ, 12-րդ փողոց, 3/4 հասցեում գտնվող կադաստրային քարտեզի 06-035-0106-0016 ծածկագրում գտնվող 0,64367 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության անշարժ գույքի աճուրդ-վաճառք: Մեկնարկային գին սահմանել 7140000 (յոթ միլիոն հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

Լոտ 4. Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Մարց գյուղի կադաստրային քարտեզի 06-071-0101-0052 ծածկագրի 0,16148 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության անշարժ գույքի վարձակալության մրցույթ 25 տարի ժամկետով:Մեկնարկային գինը սահմանել տարեկան 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

2. Հողամասերի աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%– ի չափով, մրցույթի վարձակալության նախավճարի չափը սահմանել մենարկային գնի 5%– ի չափով, աճուրդի և մրցույթի մասնակցության վճարը՝ 10000 ՀՀ դրամ, քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով:Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ և սերվիտուտներ չկան: Հողամասերի որակական հատկանիշները՝ հարթ և թեք ռելիեֆ:

Աճուրդի մասնակիցներն աճուրդի անցկացման օրը մուծում են նախավճար՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 50%-ի չափով, իսկ մրցույթի մասնակիցները՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 5%-ի չափով:Եթե մասնակիցն աճուրդի կամ մրցույթի արդյունքներով չի հաղթել, նախավճարը վերադարձվումէ նրան:Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ: Աճուրդում և մրցույթում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:Աճուրդին և մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հայտ, մասնակցության վճարի անդորրագիր և անձնագրի պատճեն Հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

4. Աճուրդի, մրցույթի պայմաններին ծանոթանալու և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Թումանյանի համայնքապետարան՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք. Թումանյան, Կենտրոնական 1: Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդի և մրցույթի անցկացման օրվանից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ: Հեռախոս՝ 098-048-046